

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԱՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի ՆՀ-728 հրմանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006թ. մայիսի 3-ի թիվ 478-Ն հրամանով հաստատված „Պետական բաժնեմասի /բաժնետոմսերի/ կառավարման լիազորված մարմինների կողմից 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովի անդամների /վերստուգողների/ ընտրության մրցութային հանձնաժողովի ձևավորման, մրցութի անցկացման ու մրցութի մասնակիցներին ներկայացվող պահանջների /չափանիշների/ մասին,, կարգի 2-րդ գլխի պահանջները

*որոշում եմ՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Ծովագյուղի ԱԱՊԿ>> պետական փակ բաժնետիրական ընկերության վերստուգողի թափուր պաշտոնի մրցութի անցկացման մրցութային հանձնաժողովի կազմը՝ Ղուկասյան Արտուշ /մարզպետի տեղակալ/, Մուշեղյան Յուրա /մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ/, Մաթևոսյան Նորիկ /մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի վարիչ/, Օհանյան Սիրաս /մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ/, Խաչատրյան Սուրիկ /մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական բաժնի վարիչ/, Գալոյան Մամիկոն /մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ/, Մելքոնյան Աշոտ /մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ/:

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Ա.Ղուկասյանին, տեղակալ՝ Յու. Մուշեղյանին , քարտուղար Ն. Մաթևոսյանին:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ